Թուրքիայէն ուսուցչուհի մը մեզի ուղղած է հետեւեալ նամակը.

Լսում եմ որ վերջանում է հայ մատրան կառուցումը Փարիզում, եւ անկեղծօրէն ուրախ եմ, որովհետեւ ինձ այնպէս է թւում, կարծես նորա շինութեան հետ միասին Փարիզի մէջ սկսելու է մի նոր կեանք եւ մի նոր ասպարէզ հայ մտքի համար, որովհետեւ հայ եկեղեցի առանց հայ մտքի ես չեմ ճանաչում եւ չեմ ընդունում։

Ինձ համար հենց այս գլխից պարզ եւ յայտնի է որ այդ եկեղեցու հետ Փարիզի հայ գաղութը պիտի հիմնէ եւ մի դպրոց, հայ մանկտին կրթելու, հայ մտքին իր պարտքը հատուցանելու համար։ Այսպէս են սկսել իրանց գոյութիւնը մեր բոլոր դպրոցները թէ՛ հնումը եւ թէ՛ նորերում, որոնցից մի քանիսը՝ Կալկաթայի ճեմարանը, Մոսկուայում Լազարեան ճեմարանը, Թիֆլիզում Ներսիսեան դպրանոցը, Էջմիածնում Գէորգեան ճեմարանը, դեռ գոյութիւն ունին ցարդ։ Հայ միտքը եւ հայ եկեղեցին անջատ չեն ապրել երբեք, գրեթէ երբեք։ Այս իսկ պատճառով՝ մի հասարակ դպրոց հիմնելու միտքը եթէ առօրեայ մի խնդիր է Փարիզում, այդ դպրոցը դնել լայն հիմունքների վրայ։ Կեդրոնացնելու համար այնտեղ հայ մտաւոր կեանք, դարձնել այն մի ակադեմիա, ստեղծել մի մատենադարան, գրադարան եւ ընթերցարան, հիմք դնել մի նոր Մխիթարեան միաբանութեան՝ անշուշտ աշխարհիկ հոգով եւ աշխարհիկ ծրագիրներով, ահա այն իղձը որ ես իրականացած կ'ուզէի տեսնել Փարիզում, մտքի, խղճի եւ գաղափարի ազատութեան այդ հին ծննդավայրում։ Այդ բանի համար առանց ֆրանսիական կառավարութեան հաւանութիւնն եւ աջակցութիւնը, ինձ թւում է շատ դիւրին, եւ ձեռք բերել նիւթական միջոց գլուխ բերելու համար այս գաղափարը՝ ո՛չ այնքան դժուար։ Փարիզի հայ գաղութին մի մասնաւոր շնորհող բարերարը անշուշտ իր մեծահոգական առատ պիտի չզլանայ մի գրուած էլ աւելացնել։ Լազարեանների նման հիմնելով եւ մի ակադեմիա կամ։ Եւրոպայի հայ գաղութը պիտի մոռանայ իր պարտքը հայ մտքին մի անքոյթ ու տեւական վառարան կանգնել Փարիզի պէս մի կեդրոնավայրում, որ ամենայարմարն է այդ նպատակին ծառայելու համար։

Ի՞նչ էք կարծում, Տնօրէնք, չէ՞ միթէ այս ամենը կամ լաւ եւս անհրաժեշտ չէ՞ այս, եւ յիշածի իրագործումը։

«Երազ» անուանեցի ես այս ամենը, որովհետեւ երազն արդէն սկսուած է «Անահիտով» եւ ձեր մի շարք այլ ընտիր հրատարակութիւններով։ Այն ինչ որ հիմա անհատներն են կատարում, պիտի ղեկավարէ ապագայում հայ ակադեմիան։

Ես կ'ուզէի որ եկեղեցւոյ օծման հետ, այս գաղափարը ամէն մի Հայի մտածութիւնը դառնար Փարիզում եւ նրա իրականացումը ճանաչուէր որպէս մի անհրաժեշտութիւն, այնպէս ինչպէս մենք զգում ենք այստեղ։

Imp. «Anahit» A. Tchobanian 88 Rue Clauzel

Le Gérant: Frédéric Macler